

Ազգային Պատգամաւորութեան անդամ Եւրոպիոյ Առաջնորդ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Խվթուճեան իւր 4/17 մարտի Վեհափառ Հայրապետին Մանչեստրից ուղղած գրութեան մէջ ի միջի այլոց ասում է. «Վեհափառ Տէր, փութամ անկեղծ շնորհաւորութիւններ և խնդակցութիւններ յայտնել Զեր Վեհափառութեան՝ Որոյ շնորհիւ և Օրբնութեամբ սոյն այս կենսական հարցն վերջապէս լուծուեցաւ կարելիութեան սահմանի մէջ»:

Ապաքէն ցանկալի և ի բոլոր սրատէ մաղթելի է, որ գարձեալ պատրանք և յուսախարութիւն չինի մեր հէգ Ազգի բաժինն, և, պատոյ, կենաց և ընչեց ապահովութիւնն և կատարեալ անդորրութիւնն ընդ միշտ տիրէ ի Հայաստան աշխարհ՝ որուն համար նոր դարագլուխ մը բացուած պիտի լինի, և որով Ազգային տարեգրութեանց մէջ, Վեհափառ Տէր, Զեր Սրբութեան անունն արդարե անմահ պիտի մնայ ի շարս Մեծանուն Հայրապետաց»:

Նոյն առթիւ Ազգային Պատգամաւորութեան անդամ, տպային խնդիրներին ծանօթ, Մեծարքոյ պլ. Յարութիւնն ն. Մոսափչեան ի միջի այլոց Լօնդոնից գրում է Վեհափառ Հայրապետին. «Որդիական ամենախորին ակնածանոք Թուլլուութիւն կը խնդրեմ շնորհաւորելու խոնարհարար Զեր Վեհափառութիւնը այն արդիւնքին համար՝ որուն յանգեցան Զեր Ա. Օծութեան կազմած Պատուիրակութեան աշխատութիւնները շնորհիւ անոր գործունէութեան մասին Զեր Վեհափառութեան նշանակած ուղղութեան ու դժած սահմանին. Թուլլուութիւն Հայկական նահանգներու Հայոց վիճակին բարեռքման համար Զեր Հայրապետական բարձր Սրբութեան ի հանդէս բերած ձեռներէցութիւնը ամենափայլուն դրուագներէն մին պիտի լինի Հայ ազգային տարեգրութեանց և ներկայ ու ապագայ ամրող Հայութիւնն Զեր Ա. Օծութեան շնորհապարտ պիտի մնայ յաւէտ առ այն. . . . Զեր Ա. Օծութեան սոյն թանկագին հրամանիր գոր ստացած ըլլալս ամենամեծ բաղդն ու փառքը պիտի ըլլայ յաւէտ իմ կեանքիս, ջանատիր եղայ կատարել կա-

բողութեանս ներած համեստ սահմանին մէջ՝ աշխատակցելով միշտ, հնար եղած չափով, Պատուիրակութեան արժանընտիր նախագահ Վահեմ. Պօղոս Նուպար փաշային: Նուիրական պարաք կը համարեմ սակայն ըսել այս առթիւթէ իրականին մէջ Ն. Վսեմութեան անհատական բարձր կարողութեանց ու անխսնջ ջանից շնորհիւ է՝ որ կարելի եղաւ Պատուիրակութեան, որքան որ հնար էր, ի զլուս հանել Զեր Վեհափառութեան հրահանգները: • • •

Մեծի պահոց իւրաքանչիւր կիւրակէ երեկոյեան Վա-
ղարշապատի եկեղեցում հերթով քարոզ խօսելու համար
Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ նշանակուած են
Տ. Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեան, Աշոտ, Կարա-
պետ, Մատթէոս եպիսկոպոսներ և Մեսրոպ վարդապետ,
իսկ աջակայ գիւղերի համար Արքունակէու վարդապետ:

Ճեմարանում ուսանողների և աշակերտների պարագ-
մունքներն ընթանում են խաղաղ։ Յաճախ երաժշտական
երեկոյթներ են լինում ուսուցիչ պ, Արշակ Տէր Յովե-
փեանի ղեկավարութեամբ։ Այդ երեկոյթները անցնում են
յաջող՝ և դառնում օգտակար՝ աշակերտութեան մէջ բուռն
սէր առաջ բերելով դէպի երաժշտութիւնը,

Մայթ Տանը մի որ ենթառնութեած է

ի նկատի առնելով ս. էջմիածնի Տաճարի վերանորոգութեան շուրջը պարբերական մամուլում վերջերս ծառագած աարաձայնութիւնները՝ մենք այստեղ բերում ենք ս. էջմիածնի վերանորոգութեան կենդրոնական մասնաժողովի և Թիֆլիսի մասնաժողովի ճարտարապետ անդամների կազմած արձանագրութիւնը՝ պարզելու եղած թիւրիմացութիւնները: